ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-29/24-I/IOS

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Գոռ Արարատի Մարգարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 200 263 108 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 200 263 108 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պ., 24/4 Հ/հ՝ 900018005299 ՀՎՀՀ՝ 00009554 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ (ստորագրություն) ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ	Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Գոռ Արարատի Մարգարյան
Կ. Տ.	Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝	(ստորագրություն) Գոռ Արարատի Մարգարյան

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-29/24-I/IOS պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Գոռ Արարատի Մարգարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-29/24-I/IOS պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 200 263 108 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. S.

Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)

Գոռ Արարատի Մարգարյան

Կ. S.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-29/24-I/IOS պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	20
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	5
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	50
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	20
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	2
Գրքեր, մենագրություններ՝	5
Գիտաժողովի նյութեր՝	2
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ Գոռ Արարատի Մարգարյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Հարությունյան Եվա Վիկտորի
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-29/24-I/IOS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	189 059 452	37 811 890	47 264 863	47 264 863	56 717 836
2.	տնտեսական ծախսեր՝	5 233 656	1 046 731	1 308 414	1 308 414	1 570 097
3.	այլ ծախսեր՝	5 970 000	1 194 000	1 492 500	1 492 500	1 791 000
Ընդամենը՝		200 263 108	40 052 621	50 065 777	50 065 777	60 078 933

Կազմակերպության տնօրեն՝ _____ Գոռ Արարատի Մարգարյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Կարինե Շամխորի Ստեփանյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-29/24-I/IOS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**5 233 656**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 750 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	473 656
4.	*կապի ծառայություն*	760 000
5.	*աղբահանություն*	0
6.	ջեռուցում	1 500 000
7.	տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ	520 000
8.	Նյութեր	230 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**5 970 000**
1.	Գիտական միջոցառումների կազմակերպում	400 000
2.	Հրատարակչական և տպագրական ծախսեր	900 000
3.	Գործուղումներ	450 000
4.	Այլ ծառայությունների՝ ձեռքբերում	4 220 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ Գոռ Արարատի Մարգարյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Կարինե Շամխորի Ստեփանյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-29/24-I/IOS պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

<< դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Մարգարյան Գոռ Արարատի	Տնօրեն	450 000	12	հիմնական	30	5 400 000
Հարությունյան Եվա Վիկտորի	Գիտքարտուղար	275 000	12	հիմնական	30	3 300 000
Հովհաննիսյան Նիկոլայ Հովհաննեսի	Տնօրենի խորհրդական	100 000	12	հիմնական	10	1 200 000
Սաֆրաստյան Ռուբեն Արամի	Տնօրենի խորհրդական	349 800	12	հիմնական	40	4 197 600
Ստեփանյան Կարինե Շամխորի	Գլխավոր հաշվապահ	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Ալեքսանյան Անուշ Սարգսի	Հաշվապահի օգնական	47 800	12	համատեղություն	20	573 600
Հովհաննիսյան Գայանե Սաշայի	Կադրերի բաժնի տեսուչ	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Վարդանյան Վրույր Կոստանի	Տնտեսական բաժնի վարիչ և վարորդ	125 000	12	հիմնական	40	1 500 000
Կարախանյան Նաիրա Վլադիմիրի	Քարտուղարուհի-գործավար	110.000	12	հիմնական	40	1 320 000
Սարգսյան Հասմիկ Ենոքի	Գրադարանի վարիչ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Գրիգորյան Նարինե Գևորգի	Գրադարանավար	104 000	12	հիմնական	40	1 248 000
Վարդանյան Սյուզաննա Ռոմիկի	Գրադարանավար	95 625	12	հիմնական	40	1 147 500
Բարսեղյան Գայանե Սուրենի	Ցերեկային պահակ	95 625	12	հիմնական	40	1 147 500
Մաթևոսյան Արմենուհի Վարդանի	Հավաքարար	110 000	12	հիմնական	40	1 320 000
Աղամալյան Թամարա Նորայրի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Անտոնյան Աննա Իշխանի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Գևորգյան Աշխենիկ Սուրենի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Գևորգյան Ռուզաննա Մուշեղի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Միրզոյան Մոնիկա Հովիկի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Տոնոյան Աիդա Ֆերդինանտի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Մելքոնյան Եկատերինա Կարապետի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Գիտական անձնակազմ						
Բաժին Հին Արևելք						
Քոսյան Արամ Վաղարշակի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ղազարյան Ռոբերտ Պետրոսի	Առաջատար գիտաշխատող	209 995	12	համատեղություն	20	2 519 940
	Առաջատար գիտաշխատող			համատեղություն		

Գրեկյան Երվանդ Համբարձումի		209 995	12		20	2 519 940
Մանասերյան Ռուբեն Լևոնի	Առաջատար գիտաշխատող	314 250	12	հիմնական	30	3 771 000
Մարգարյան Երվանդ Հրանտի	Առաջատար գիտաշխատող	209 995	12	համատեղություն	20	2 519 940
Հմայակյան Հասմիկ Հարությունի	Ավագ գիտաշխատող	300 176	12	հիմնական	40	3 602 112
Խանզադյան Մարիամ Գագիկի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Ցականյան Ռուսլան Արշակի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Բաժին Թուրքիայի բաժին						
Հովսեփյան Լևոն Սահակի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ստեփանյան Հասմիկ Ավետիսի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Մելքոնյան Քրիստինե Ֆելիքսի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հովհաննիսյան Անուշ Ռաֆֆիի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մանուկյան Տաթևիկ Մովսեսի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Սահակյան Կարոլինա Մարտիկի	Գիտաշխատող	115 090	12	հիմնական	40	1 381 080
Թորոսյան Վերոնիկա Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Բաժին Իրանի բաժին						
Իսկանդարյան Գոհար Մանվելի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Բայբուրդյան Վահան Առաքելի	Առաջատար գիտաշխատող	209 995	12	հիմնական	20	2 519 940
Կոզմոյան Արմանուշ Կոզմոյի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Իսրայելյան Արմեն Հրաչիկի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ամրյան Թերեզա Իշխանի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Տոնոյան Արտյոմ Արտաշեսի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Բաժին Արաբական երկրների բաժին						
Հարությունյան Լիլիթ Միշայի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Գասպարյան Արամ Աշոտի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Գևորգյան Գոռ Գևորգի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Վարդանյան Գրիգոր Կարապետի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Թամրազյան Անուշ Հրաչյայի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Բաժին Միջազգային հարաբերությունների բաժին						
Փաշայան Արաքս Ասատուրի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024

Հարությունյան Աղավնի Ալեքսանդրի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Հարությունյան Եվա Վիկտորի	Ավագ գիտաշխատող	75 069	12	ներքին համատեղություն	10	900 828
Նավասարդյան Նազելի Սերժիկի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Մանվելյան Արմեն Բախշիի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ղահրիյան Մուշեղ Հայկազնի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Աբաջյան Արամ Աշոտի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Բաժին Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժին						
Բոզոյան Ազատ Արտաշի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Կոստիկյան Քրիստինե Պետրոսի	Առաջատար գիտաշխատող	209 995	12	համատեղություն	20	2 519 940
Կիրակոսյան Հասմիկ Ցոլակի	Առաջատար գիտաշխատող	104 997	12	համատեղություն	10	1 259 964
Միքայելյան Տիգրան Լեոնիդի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Միրզաբեկյան Գեորգի Ալեքսանդրի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Նահապետյան Գաբրիել Հայկազի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Բաժին Քրիստոնյա Արևելքի բաժին						
Հակոբյան Ալեքսան Հակոբի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Պալամարչուկ Անաստասիա Անդրեյի	Առաջատար գիտաշխատող	174 940	12	համատեղություն	20	2 099 280
Մարգարյան Գոռ Արարատի	Ավագ գիտաշխատող	75 069	12	ներքին համատեղություն	10	900 828
Մաիլյան Բենիամին Վիկտորի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մխիթարյան Գոհար Ժորայի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ավետյան Կարինե Դերենիկի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մաթևոսյան Արթուր Կորյունի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հարությունյան Անուշ Ավետիքի	Կրտսեր գիտաշխատող	44 975	12	համատեղություն	10	539 700
Բաժին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ						
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						6700000
Ընդհանուր գումար՝						189 059 452

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Գոռ Արարատի Մարգարյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն) Գայանե Հովհաննիսյան (ԱԱՀ)

Կ. S.

Հավելված N 6
«29» հունվարի 2024 թ.
N 1-29/24-I/IOS պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը: Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը: Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը»	Ծրագիրն իր մեջ ներառում է մի քանի ուղղություններ՝ Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը, Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը, Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Սույն Ծրագիրն իր բնույթով և հիմնախնդիրների ընդգրկումով, բազմապլանային է և ընդգրկում է ՀՀ արտաքին	Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01.01.2024-31.03.2024

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

		քաղաքականության համար քաղաքական, հասարակական, սոցիալական և տնտեսական կարևորագույն խնդիրներ		
			Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01. 04. 2024-30. 06. 2024
			Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01. 07. 2024-30. 09. 2024
			Գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարում, արտերկրյա գործուղումներ, դիվանագիտական հարթակներում հանդիպումների կազմակերպում, գիտական արդյունքների հրապարակում:	01. 10. 2024-27. 12. 2024

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Գոռ Մարգարյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Գոռ Մարգարյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*